Հաստատված է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի 2018թ. հունվարի 19-ի թիվ 4 նիստում
գիտական խորհրդի նախագահ

Ռուբեն Միրզախանյան

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) Մաթեմատիկական կրթության գիտական լաբորատորիան (այսուհետև՝ Լաբորատորիա) Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում է:

1.2. Լաբորատորիան ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է Համալսարանի կանոնադրությամբ սահմանված կարգով:

1.3. Լաբորատորիան իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ, Համալսարանի կառավարման մարմինների որոշումներով, Համալսարանի ռեկտորի հրամաններով, սույն կանոնադրությամբ:

1.4. Լաբորատորիան կարող է ունենալ իր անվամբ ձևաթուղթ:

2. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

2.1. Լաբորատորիայի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Համալսարանի ռեկտորը, իսկ համապատասխան վերահսկողությունը՝ ռեկտորի հանձնարարությամբ համապատասխան պրոռեկտորը:

2.2. Լաբորատորիան անմիջապես ղեկավարում է Լաբորատորիայի վարիչը, որին նշանակում և պաշտոնից ազատում է Համալսարանի ռեկտորի հրամանով:

2.3. Լաբորատորիայի վարիչի իրավունքներն են.

ա) Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, փաստաթղթեր,

բ) ներկայացնել առաջարկություններ Համալսարանի ռեկտորին' Լաբորատորիայի աշխատողներին խրախուսելու կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ,

գ) ներկայացնել առաջարկություններ Լաբորատորիայի գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով,

դ) ներկայացնել գիտական նախագծեր պետական և ոչպետական կազմակերպություններից Լաբորատորիայի գործունեության համար ֆինանսական միջոցներ ձեռք բերելու նպատակով,

ե) ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

2.4. Լաբորատորիայի վարիչի պարտականություններն են.

ա) ղեկավարել և վերահսկել Լաբորատորիայի ընթացիկ գործունեությունը,

բ) ստորագրել Լաբորատորիայի կողմից ներկայացվող փաստաթղթերը, ապահովել Լաբորատորիայի գործառույթների շրջանակում զեկուցագրերի,

տեղեկանքների, առաջարկությունների և այլ փաստաթղթերի կազմելու գործընթացը,

գ) մասնակցել Համալսարանի ռեկտորի կողմից հրավիրվող համապատասխան նիստերին, խորհրդակցություններին,

դ) կատարել աշխատանքի բաժանում Լաբորատորիայի աշխատողների միջև,

ե) մշակել Լաբորատորիայի գործունեության տարեկան ծրագիրը,

զ) սահմանված ժամկետում Համալսարանի ռեկտորին ներկայացնել Լաբորատորիայի գործունեության տարեկան հաշվետվությունը,

է) ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ պարտականություններ,

2.5. Լաբորատորիայի վարիչի բացակայության ժամանակահատվածում նրան փոխարինում է աշխատողներից որևէ մեկը՝ Համալսարանի ռեկտորի հրամանի հիման վրա:

2.6. Լաբորատորիայի վարիչը պատասխանատու է Լաբորատորիայի կողմից իրականացվող աշխատանքների որակի և Լաբորատորիայի առջև դրված խնդիրների պատշաճ և արդյունավետ լուծման համար:

3. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Օգտագործելով լաբորատորիայի գիտական ներուժը.

3.1. Իրականացնել մեթոդամանկավարժական նորարությունների մշտադիտարկում և մշակել շարունակական մաթեմատիկական կրթության փուլերի համար համապատասխան առաջարկություններ:

3.2. Սեմինարների, գիտաժողովների, խորհրդատվությունների, վերապատրաստման դասընթացների և այլ միջոցներով աջակցել դասախոսների և կրթական տարբեր ծրագրերի ուսանողների (ասպիրանտներ, մագիստրոսներ) գիտական մակարդակի բարձրացմանը:

3.3. Տարբեր մակարդակի բացատրական բառարաններ ստեղծելով, աջակցել հայկական մաթեմատիկական եզրութաբանության համակարգմանը:

3.4. Հաշվի առնելով մաթեմատիկայի պատմության ուսումնասիրման մանկավարժական մեծ նշանակալիությունը, ստեղծել համապատասխան դասընթացներ և ուսումնական ձեռնարկներ:

4. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

4.1. Լաբորատորիայի աշխատողներն աշխատանքի ընդունվում և ազատվում են Համալսարանի ռեկտորի հրամանով:

4.2. Լաբորատորիայի աշխատողները կատարում են իրենց անմիջական ղեկավարի հանձնարարականները, աշխատանքային պայմանագրով սահմանված

պարտականությունները և պատասխանատու են դրանց կատարման համար:

4.3. Լաբորատորիայի աշխատողներն օգտվում են ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև Համալսարանի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով, աշխատանքային պայմանագրով ամրագրված իրավունքներից:

4.4. Լաբորատորիայի աշխատողները պարտավոր են ենթարկվել ՀՀ աշխատանքային օրենսդրությանը, Համալսարանի ներքին կարգապահական կանոններին և պահպանել աշխատանքային էթիկայի կանոնները:

4.5. Լաբորատորիայի կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատվում և փոփոխվում է Համալսարանի կանոնադրությամբ սահմանված կարգով՝ լաբորատորիայի վարիչի ներկայացմամբ:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն կանոնադրությունը, դրա փոփոխությունները և լրացումները հաստատվում են Համալսարանի ռեկտորի հրամանով: